

Տարածման ժողովին դիւանին արձանագրութեանց համաձայն, 23 Յունուար 1663 թուակիր, Կարտինալ Սֆորցան կը տեղեկագրէ որ Հէլիոպոլսոյ (?) Գերապայծառը իր ճամբորդութիւնը դէպի Չինաստան կատարած ատեն, Երեք Եկեղեցիներ (Էջմիածին) ըսուած, տեղւոյն մասին ուր կը բնակի Հայոց Պատրիարքը, ... կ'ըսէ թէ Պատրիարքը Կաթողիկէ է, հետեւեալ պատճառներով:

Ա.— Որովհետեւ բազմաթիւ մարդիկ կը վկայեն:

Բ.— Հիմնուած Գերապայծառ Բիրոմալիի հետ ունեցած իր խօսակցութեան վրայ:

Գ.— Իր Պապին գրած նամակին հիմամբ, ուր գլուխ նկատած էր զայն:

Դ.— Որովհետեւ ուզած է ջնջել սովորութիւնը... նզովելու... Լեւոն Քահանայապետը:

Ե.— Որովհետեւ կը խորհի Հռովմ գալու մասին...»⁽⁵⁾

Հէլիոպոլսոյ Գերապայծառը սակայն իրաւամբ կը տարակուսի Յակոբ Դ-ի կաթողիկէ ըլլալուն մասին, հակառակ յիշեալ պատճառներուն: Կաթողիկոսը իր հետ դաւանանքի մասին ոչ մէկ խօսակցութիւն ունեցած է: Իրենց խօսակցութեանց ներկայ եղած է իբրեւ թարգման Ստեփանոս վարդապետ Վարդանուվիչ (Լեհացիին):

Արդարեւ «Բազմաթիւ մարդիկ» կըրնան վկայել, սակայն երբ ապացոյց կը պահի եղածը լոկ ըսի ըսաւ կ'ըլլայ: Շահեկան պիտի ըլլար գիտնալ թէ ովքեր էին այն բազմաթիւ մարդիկը, որոնք կը վկայէին կաթողիկոսին Հռովմէագական ըլլալուն մասին:

Ոչ ալ կարելի է հաւատք ընծայել Բիրոմալիի ըսածներուն քանի որ ան կրնար սխալ ներկայացնել իրականութիւնը Հռովմի մէջ պարզապէս վարկ չհասնու համար: Բիրոմալին սիրուած չէր Հայաստան եւ Պարսկաստան գլխա-

նուղ ուրիշ կաթողիկէ քարոզիչներէն, որոնց վախ կ'ազդէր այս վարպետ քարոզիչին գործունէութիւնը:

Նամակին մասին, որուն ակնարկութիւն եղաւ նոյն այն նամակն է որ գըրուած էր Յակոբ Դ-է Սեպտ. 28 1661-ին զոր մենք ամբողջութեամբ մէջբերեցինք: Հոն ոչ մէկ խօսք կայ Յակոբ Կաթողիկոսէն Հռովմէականութիւնը ընդունելու: Նամակը ինքնին շատ զգուշութեամբ գրուած, ոչ մէկ կասկած կրնայ յարուցանել որ պապականութեան համամտութիւն կայ գրողին մօտ: Նամակին հասցեագրութիւնը պարզապէս յարգանքի ձեւական ոճ մըն է: Արդարեւ Պապը եւ Հռովմայ Աթոռը «Նախամեծար Գլուխ է Հանրական Եկեղեցեաց Քրիստոսի»: Հանրական հոս Տիեզերական իմաստով է, որ տիպոս մըն է Հռովմէական Աթոռէն գործածուած: Հայոց Եկեղեցին Հանրական եկեղեցիներէն չէ, եւ գոնէ Ե. գարէն վերջ Հանրական եկեղեցիի մաս չէ կազմած: Հռովմի Աթոռին Քահանայապետը պարտ ու պատշաճ կարելի է «Մեծին Պետրոսի Փոխանորդ» նկատել, քանի որ այդպէս ներկայացուած է: Նոյնպէս ալ Հայոց Կաթողիկոսը «Թագէոս Առաքեալի Փոխանորդ» է: Վերջապէս Յակոբ Կաթողիկոս դաւանական վէճի համար չէ որ կը գրէր Վեհափառ Պապին, այլ յարգալից նամակ մըն էր գրածը, Սրբազան քահանայապետը քրիստոնեայ թագաւորներու հաշտութեան առթիւ շնորհաւորող: Ոչ միայն շնորհաւորութիւնը ուչ մնացած էր այլ եւ հաստատօրէն Բիրոմալիէն սխալ բացատրուած եւ այդպէսով ալ ձեռք բերուած էր այս անմեղ նամակը, որ Հռովմի մէջ ալ շահախնդիր մարդիկ սխալ կը ներկայացնէին սրբազան Պապին եւ Հաւատոյ Տարածման ժողովոյն Մեծաւորներուն: Յակոբ Դ. ամենէն շատ միայն նիւթական ակնկալութիւն մը կրնար ունենալ Պապէն իր այս նամակով, եւ ատոր համար իսկ կը տարուէր նկարագրելով իր եւ իր ժողովուրդին նեղութիւնները: Տեսնք որ Պապին մերժումը որոշ եւ կտրական էր «որեւէ կերպով անոնցմէ (Հայոց նեղութիւններէ) ազա-

(5) L'Unione Degli Armeni di Polonia Con la Santa Sede (1626-1686) Գրեց Գրիգոր վրդ. Պետրովիչ, Հռովմ, 1950 էջ 197-198: